ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Պ-253-04.05.2022-ՊԱ-11/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Օրենքի նախագիծը կամ օրենքի նախագծի մասը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հեղինակի վերաբերմունքը	Առաջարկու-թյուններն ընդունելու կամմերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Հոդված 1-ին	Առաջարկվում է վարչական իրավախախտում կատարած անձին վարչական տույժի վճարման 75 տոկոսից ազատելու արտոնություն տալ միայն այն դեպքում, եթե վերջինս դրա մասին ապացույցը ներկայացնի ոչ թե 48, այլ 24 ժամվա ընթացքում:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
2.	ՀՀ Աժ փորձագիտական և վերլուծական վարչություն	Հոդված 1-ին	Առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի լրիվ անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին :	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

3.	ՀՀ ԱԺ փորձագիտական և վերլուծական վարչություն	Հոդված 1-ին	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում 129.2-րդ հոդվածին հղում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
4.	ՀՀ ԱԺ փորձագիտական և վերլուծական վարչություն	Հոդված 1-ին	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով լրացվող 4-րդ մասի համարակալումը հանել՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Օրենսգրքի 129.2-րդ հոդվածի մասերը համարակալված չեն:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է